

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2016-9-1-Ա

ք. Երևան

28.12.2016թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2016 թվականի դեկտեմբերի 28-ի նիստում քննարկեց 2016 թվականի դեկտեմբերի 7-ին արտոնագրային հավատարմատար Վահագն Պետրոսյանի (այսուհետ՝ բողոքարկող) կողմից ներկայացված՝ Անատոլի Վասիլի Գոնչարի (Ուկրաինա, 60022, Չեռնովիցկայա մարզ, Խոտինսկի շրջան, գ. Շիլիվցի, Միրա փող., տուն. 33) «Կափարիչ ապակե բանկայի դարձածալման համար» արդյունաբերական նմուշի (№20150026) վկայագիր տալը ամբողջությամբ մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Արդյունաբերական նմուշի վկայագիր տալը ամբողջությամբ մերժվել է հետևյալ հիմքերով.

Ներկայացված արդյունաբերական նմուշի փորձաքննության արդյունքում պարզվել է, որ «Գյուտերի, օգտակար մոդելների եւ արդյունաբերական նմուշների մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի եւ «Գյուտերի, օգտակար մոդելների եւ արդյունաբերական նմուշի հայտի ձեւակերպման, ներկայացման եւ քննարկման կարգի» 41-րդ գլխի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն տվյալ նմուշը ենթակա չէ գրանցման, քանի որ այն չի համապատասխանում արդյունաբերական նմուշի պահպանունակության պայմաններից մեկին՝ ինքնատիպությունը: Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերի համաձայն արդյունաբերական նմուշը ինքնատիպ է, եթե ընդհանուր տպավորությունը, որը թողնում է տեղեկացված սպառողի վրա, տարբերվում է այդպիսի սպառողի վրա ցանկացած այլ արդյունաբերական նմուշի թողած ընդհանուր տպավորությունից, որը հանրամատչելի է դարձել մինչեւ հայտի ներկայացման թվականը: Արդյունաբերական նմուշի ինքնատիպությունը գնահատելիս հաշվի է առնվում դրա ստեղծման ժամանակ դիզայների ազատության աստիճանը:

Տվյալ դեպքում ներկայացված «Կափարիչ ապակե բանկայի դարձածալման համար» արդյունաբերական նմուշի երկու տարբերակները ենթակա չեն գրանցման, քանի որ

դրանք չեն համապատասխանում ինքնատիպության պայմանին, այն է՝ կափարիչի կենտրոնում հատած կոնի տեսքով ելուստը, որը հայտնի է եւ կրկնում է <http://banochka.com.ua/p90160678-kryshka-zakatochnaya-tvist.html> կայքում զետեղված կափարիչի կենտրոնում հատած կոնի տեսքով ելուստը; շրջանաձեւ երկու զույգ կատարումը կափարիչի պարագծով նույնպես կրկնում են շուկայում առկա կափարիչների շրջանաձեւ ռեյեֆները («Եվրո քապ», «Խոզայուշկա»), այսինքն տեղեկացված սպառողի վրա տվյալ արդյունաբերական նմուշի թողած տպավորությունը չի տարբերվում մինչ հայտի ներկայացման թվականը հանրամատչելի դարձած այլ («Եվրո քապ», «Խոզայուշկա», <http://banochka.com.ua/p90160678-kryshka-zakatochnaya-tvist.html>) արդյունաբերական նմուշների թողած ընդհանուր տպավորությունից, ինչից հետեւում է, որ տվյալ արդյունաբերական նմուշի ստեղծման ժամանակ դրա հեղինակի ազատության աստիճանը բավականաչափ սահմանափակված է եղել հանրամատչելի դարձած այլ արդյունաբերական նմուշներով:

Ներկայացված արդյունաբերական նմուշի 2-րդ տարբերակի մեջ կարմիր գույնով ներկված եւ «КНОПКА» բառով նշված կենտրոնական ելուստի առկայությունը արդեն իսկ հայտնի մնացած էական հատկանիշների հետ չի կարող դիտարկվել որպես ստեղծագործական աշխատանքի արդյունք, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1100-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն արդյունաբերական նմուշը համարվում է մտավոր գործունեության արդյունք: Այսինքն, արդյունաբերական նմուշը ստեղծագործական աշխատանքի արդյունք է: Արդեն հայտնի ելուստը կարմիր գույնով ներկելը եւ «КНОПКА» բառով նշելը ոչ այլ ինչ է, քան տվյալ ելուստի ֆունկցիոնալ նշանակության նշում, որտեղ կարմիր գույնով նշելը ընդհանրապես ընդունված է զանազան տեխնիկական միջոցներում որոշակի տարրեր նշելու համար եւ «КНОПКА» բառը ուղղակիորեն նման է տվյալ ելուստին (սեղմակ): Այսինքն տվյալ լուծումը չի պարունակում ստեղծագործական աշխատանքի տարրեր:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ: Բողոքարկողը բողոքում նշել է, որ իր կարծիքով Մտավոր սեփականության գործակալությունը իրավասու չէ ստուգել արդյունաբերական նմուշի ինքնատիպության պահանջը, սակայն «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ Օրենքի 22-րդ և 23-րդ հոդվածների, ինչպես նաև «Գյուտի, օգտակար մոդելի և արդյունաբերական նմուշի հայտի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» 68-րդ կետի համաձայն

գործակալությունը որպես պետական լիազոր մարմին իրավասու է իր տրամադրության տակ եղած տեղեկությունների հիման վրա կայացնել համապատասխան որոշումը:

Բողոքարկողը համաձայն չէր կոլեգիայի առաջարկի հետ:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ որոշումն իրավաչափ է և ներկայացված արդյունաբերական նմուշը ինքնատիպության պահանջի խախտման պատճառով ենթակա է մերժման:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Վահագն Պետրոսյանի կողմից ներկայացված «Կափարիչ ապակե բանկայի դարձածալման համար» արդյունաբերական նմուշի (No20150026) վկայագիր տալը ամբողջությամբ մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոքը և փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ

ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ